ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«27» «02» 2019թ.**
ժ 10:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԲԱ/
ՎալերՀոդաբաշյան/ԳԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով՝

- <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը (եզրակացություն) և հրավերով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը՝
- N 2, 3, 4, 7, 8, 9, 12, 13, 17, 18, 22, 23, 24, 28, 30, 33 և 35 չափաբաժիններով՝ <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ չսահմանելով:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարութունը հրապարակելուց հետո ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

_____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան